«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Կողբ ՄԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ koghbunited@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.04.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Նազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նազելի Արսենյան
	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	16C2-027
Խախտում՝	1. «Կողբ-Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Անդրանիկ Պողոսյանի (45655) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքը (Հավելված 1 Զ, 15-րդ կետ) 2. «Կողբ-Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Բեջանյանի (42644) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքը (Հավելված 1 Զ, 15-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 16 տ. մանկապատանեկան առաջնություն
Խաղ՝	«ԽՄՕՄՄ-09» - «Կողբ-Յունայթեդ-09», 20.04.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Կողբ-Յունայթեդ -09» թիմի ֆուտբոլիստ Անդրանիկ Պողոսյանին (45655) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի ապրիլի 20-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Կողբ ՄԱ» ՀԿ.-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով:
2. «Կողբ-Յունայթեդ -09» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Բեջանյանին (42644) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի ապրիլի 20-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Կողբ ՄԱ» ՀԿ.-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: